

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**  
**«Արցախբանկ» ՓԲԸ բաժնետերերի**  
**ընդհանուր ժողովի՝**  
**12.02.1996թ. թիվ 1 արձանագրությամբ**

**Փոփոխված է**  
**«Արցախբանկ» ՓԲԸ բաժնետերերի**  
**ընդհանուր ժողովի՝**  
**22.06.2018թ. թիվ 3 որոշմամբ**

**Artak**  
**Balayan**

Digitally signed by Artak Balayan  
DN: c=AM, st=Yerevan,  
l=Yerevan, o=ARTSAKHBANK  
CJSC,  
email=infosec@artsakhbank.am,  
cn=Artak Balayan  
Date: 2018.06.25 17:47:28  
+04'00'

**«Արցախբանկ» ՓԲԸ բաժնետերերի**  
**ընդհանուր ժողովի նախագահ՝**  
**Ա. Սելեֆյան**



**ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝**

Digitally signed by Arthur Javadyan  
Date: 2018.07.12 17:00:28 AMST  
Reason: Չդասեցված է 11.07.2018թ.  
(Ն.Որ, ազրոյութուն)



**ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**«ԱՐՑԱԽԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ**

**Նոր խմբագրություն**

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Արցախբանկ» Փակ Բաժնետիրական Ընկերությունը (այսուհետ՝ Բանկ) իրավաբանական անձ է, որը «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից տրված լիցենզիայի համաձայն իրականացնում է բանկային գործունեություն:

1.2 Բանկը ստեղծվել է Բանկի հիմնադիրների (բաժնետերերի) ընդհանուր ժողովի որոշմամբ 12.02.1996թ. կնքված հիմնադիր պայմանագրի համաձայն ստեղծված «Արցախբանկ» Փակ Բաժնետիրական Ընկերությունից 06.11.1996թ. Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ «Արցախբանկ» բաց բաժնետիրական ընկերության, այսուհետև՝ 23.06.2001թ. որոշմամբ «Արցախբանկ» փակ բաժնետիրական ընկերության վերակազմավորվելու միջոցով:

1.3 Բանկը ստեղծվել և ձեռք է բերել իրավաբանական անձի կարգավիճակ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկում գրանցվելու պահից և իրավունք ունի իրականացնել բանկային գործունեություն և օրենսդրությամբ սահմանված ֆինանսական գործառնություններ՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկից բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիա ստանալու պահից:

1.4 Իր գործունեությունն իրականացնելիս Բանկը ղեկավարվում է գործող օրենքներով, Հայաստանի Հանրապետության ԿԲ նորմատիվ և այլ իրավական ակտերով, սույն կանոնադրությամբ և Բանկի այլ ներքին իրավական ակտերով:

1.5 Բանկի հիմնադիր փաստաթուղթը կանոնադրությունն է (այսուհետ՝ Կանոնադրություն), որի պահանջները պարտադիր են Բանկի բաժնետերերի և կառավարման մարմինների համար:

1.6 Բանկն ունի ֆիրմային անվանում, սեփականության իրավունքով իրեն պատկանող գույք, խորհրդանիշ, իր խորհրդանիշով և անվանումով կլոր կնիք, ձևաթերթեր, անկյունային դրոշմակնիք և համապատասխան կնիքներ Բանկի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների (առկայության դեպքում) համար:

1.7 Բանկն իրավունք ունի իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.8 Բանկի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Չարենցի 1բ:

1.9 Բանկի լրիվ անվանումն է՝

- հայերեն՝ «Արցախբանկ» Փակ Բաժնետիրական Ընկերություն
- ռուսերեն՝ Закрытое Акционерное Общество “Арцахбанк”
- անգլերեն՝ Closed Joint Stock Company “Artsakhbank”:

1.10 Բանկի կրճատ անվանումն է՝

- հայերեն՝ «Արցախբանկ» ՓԲԸ
- ռուսերեն՝ ЗАО “Арцахбанк”
- անգլերեն՝ “Artsakhbank” CJSC:

1.11 Բանկն իր շահերը ներկայացնելու և պաշտպանելու, տեղեկություններ փոխանակելու և օրենսդրությամբ սահմանված այլ նպատակներով կարող է անդամակցել բանկային միությունների և ասոցիացիաների կամ հանդիսանալ դրանց հիմնադիր:

1.12 Բանկն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում սեփականության իրավունքով իրեն պատկանող ամբողջ գույքով (միջոցներով), եթե այլ բան նախատեսված չէ գործող օրենսդրությամբ:

1.13 Բանկը պատասխանատվություն չի կրում պետական իրավասու մարմինների կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով հաճախորդի հաշիվների կամ գույքի արգելադրման, առգրավման կամ բռնագանձում տարածելու հետևանքով հաճախորդի կրած վնասների համար:

1.14 Բանկը պատասխանատվություն չի կրում իր բաժնետերերի պարտավորությունների համար: Բանկի բաժնետերերը պատասխանատվություն չեն կրում Բանկի պարտավորությունների համար և Բանկի գործունեության հետ կապված վնասների ռիսկը կրում են իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում:

1.15 Բանկի բաժնետերերը, ղեկավարները և այլ անձինք օրենսդրությամբ նախատեսված դեպքերում Բանկի առջև կարող են կրել պատասխանատվություն իրենց գործողությունների կամ անգործության համար:

1.16 Արգելվում է որևէ կերպ ներգործել Բանկի ղեկավարների վրա՝ նրանց պաշտոնական պարտականությունների կատարման ընթացքում կամ միջամտել Բանկի գործունեությանը՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

1.17 Բանկի ղեկավարի վրա ապօրինաբար ներգործելու կամ Բանկի ընթացիկ գործունեությանն ապօրինաբար միջամտելու հետևանքով Բանկին պատճառված վնասը ենթակա է հատուցման՝ օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

## **2. ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ**

2.1 Բանկը չի կարող իրականացնել արտադրական, առևտրային և ապահովագրական գործունեություն, եթե օրենքով այլ բան սահմանված չէ:

2.2 Բանկն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կարող է՝

1) ընդունել ավանդներ.

2) տրամադրել վարկեր.

3) իրականացնել դրամական պահանջների զիջման դիմաց ֆինանսավորում (ֆակտորինգ)).

4) տրամադրել բանկային երաշխիքներ, բացել կամ իրականացնել հաշվարկներ ակրեդիտիվներով.

5) մատուցել վճարահաշվարկային ծառայություններ, այդ թվում՝ բացել, վարել, սպասարկել բանկային հաշիվներ, ներառյալ՝ բանկերի թղթակցային հաշիվները.

6) թողարկել, սպասարկել արժեթղթեր, իր անունից և իր հաշվին արժեթղթերով, ածանցյալ ֆինանսական գործիքներով գործարքներ կատարել.

7) մատուցել ներդրումային և ոչ հիմնական ծառայություններ՝ համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի.

8) օրենքով սահմանված պահանջները բավարարելու դեպքում իրականացնել ներդրումային ֆոնդի (ներառյալ՝ կենսաթոշակային ֆոնդի) պահառության գործունեություն.

9) կառավարել այլ անձանց միջոցները (հավատարմագրային (լիազորագրային) կառավարում), բացառությամբ արժեթղթերի փաթեթի, որի կառավարումն իրականացվում է սույն կետի 7-րդ թվարկման համաձայն.

10) գնել, վաճառել, կառավարել բանկային ոսկի, ստանդարտացված ծուլակտորներ և հուշադրամ.

11) գնել, վաճառել, փոխանակել արտարժույթ.

12) իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ).

13) ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, ոսկերչական իրեր, փաստաթղթեր և այլ արժեքներ.

14) մատուցել ֆինանսական խորհրդատվություն, բացառությամբ արժեթղթերում ներդրումների հետ կապված խորհրդատվության, որն իրականացվում է սույն կետի 7-րդ թվարկման համաձայն.

15) ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ.

16) իրականացնել պարտքերի հավաքման հետ կապված գործողություններ.

17) իրացնել ապահովագրական վկայագրեր և (կամ) պայմանագրեր, օրենքով սահմանված կարգով իրականացնել ապահովագրական գործակալի գործառնություններ.

18) իրականացնել «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հաշվի օպերատորի գործառույթներ:

19) իրականացնել օրենքով չարգելված այլ գործունեություն:

2.3 Կանոնադրության 2.2 կետում նշված գործառնությունները կատարվում են Հայաստանի Հանրապետության դրամով և արտարժույթով՝ պահպանելով օրենսդրությամբ սահմանված պահանջները:

2.4 Կենտրոնական բանկի թույլտվությամբ Բանկը կարող է իրականացնել «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ուղղակիորեն չնախատեսված գործունեություն կամ գործառնություններ, եթե դրանք բխում են կամ սերտորեն կապված են բանկային գործունեության կամ Կանոնադրության 2.2. կետում նախատեսված գործառնությունների հետ, և եթե դրանք թույլատրելի չի հակասում «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նպատակներին և էականորեն չի վտանգում Բանկի ավանդատուների և վարկատուների շահերը:

2.5 Բանկը Կանոնադրության 2.2 կետում սահմանված գործառնությունների, ինչպես նաև բանկային գործունեության բնականոն ընթացքն ապահովող այլ (օժանդակ) գործառնությունների կատարումն ամբողջությամբ կամ մասամբ կարող է որոշակի ժամկետով կամ անժամկետ պատվիրակել այլ իրավաբանական անձանց (կոնտրագենտ)՝ պահպանելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պահանջները: Ընդ որում, գործառնությունների պատվիրակման համար Բանկը պետք է ստանա Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը:

2.6 Բանկը «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերում և կարգով իրավունք ունի իրականացնել արժեթղթերի շուկայի մասնագիտացված գործունեություն (բրոքերային, դիլերային, հավատարմագրային կառավարման, պահառուական և այլն):

2.7 Բանկն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով թղթակցային հաշիվներ բացել այլ բանկերում:

2.8 Բանկն օրենսդրությամբ սահմանված դեպքերում կարող է իրականացնել պետական բյուջեի դրամարկղային սպասարկման գործառնություններ:

2.9 Հաճախորդի հետ որևէ գործարար հարաբերություն կարող է հաստատվել կամ միանգամյա գործարք կնքվել միայն Բանկի կողմից նույնականացման համար օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերն (տեղեկություններն) ստանալուց և դրանց իսկությունը ստուգելուց հետո: Բանկն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով միջոցներ է ձեռնարկում իր հաճախորդի կողմից իրականացվող կասկածելի գործարար հարաբերությունները և գործարքները բացահայտելու ու կանխելու ուղղությամբ, ինչպես նաև փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելմանն ուղղված իրականացում է այլ պարտականություններ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.10 Բանկը երաշխավորում է իր հաճախորդների բանկային և այլ գաղտնիք հանդիսացող տեղեկությունների պահպանումը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.11 Ֆինանսական գործառնությունների իրականացման ընթացքում Բանկն ապահովում է սպառողների շահերի պաշտպանությունը, այդ թվում՝ «Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

2.12 Բանկում գտնվող հաճախորդների դրամական միջոցների (ներառյալ քաղաքացիների ավանդների) և այլ գույքի վրա կարող է կալանք դրվել և բռնագանձում տարածվել միայն գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.13 Բանկն ինքն է որոշում ներգրավվող ավանդների, տրամադրվող վարկերի, սեփական արժեթղթերի, մատուցվող այլ ծառայությունների տոկոսադրույքները, սակագների և միջնորդավճարների չափը, արժույթային փոխարժեքները՝ պահպանելով օրենսդրության պահանջները:

2.14 Բանկն իր գործունեության այնպիսի կանոններ է սահմանում, որպեսզի բացառվի շահերի բախումը, մասնավորապես՝

ա) մեկ հաճախորդի նկատմամբ Բանկի ստանձնած պարտավորությունները չհակասեն մեկ այլ հաճախորդի նկատմամբ նրա ստանձնած պարտավորություններին:

բ) Բանկի ղեկավարների և աշխատողների շահերը չհակասեն Բանկի հաճախորդի նկատմամբ Բանկի ստանձնած պարտավորություններին:

2.15 Բանկը կարող է կնքել քաղաքացիաիրավական ցանկացած գործարք, որն անհրաժեշտ կամ նպատակահարմար է իրեն օրենքով և Կանոնադրությամբ թույլատրված գործունեությունն իրականացնելու համար և որը չի հակասում «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված այլ պահանջների:

2.16 Առանց Կենտրոնական բանկի նախնական համաձայնության Բանկին արգելվում է այնպիսի գործարքներ կամ գործառնություններ իրականացնելը, որոնց արդյունքում Բանկի մասնակցությունը՝

ա) մեկ այլ անձի կանոնադրական հիմնադրամում 4,99 տոկոս և ավելի մասնակցություն է.

բ) մեկ այլ անձի կանոնադրական հիմնադրամում գերազանցում է Բանկի ընդհանուր կապիտալի 15 տոկոսը.

գ) բոլոր անձանց կանոնադրական հիմնադրամներում գերազանցում է Բանկի ընդհանուր կապիտալի 35 տոկոսը.

դ) յուրաքանչյուր նոր գործարքի կամ գործարքների իրականացման դեպքում մեկ այլ կամ միևնույն անձի կանոնադրական հիմնադրամում գերազանցում է 9 տոկոսը, 15 տոկոսը, 25 տոկոսը, 35 տոկոսը, 50 տոկոսը, 70 տոկոսը կամ կազմում է 100 տոկոս:

2.17 Կանոնադրության 2.16 կետով նախատեսված նախնական համաձայնությունը չի պահանջվում, եթե՝

ա) մեկ այլ անձի կանոնադրական կապիտալում մասնակցությունը Բանկին է անցել Բանկի նկատմամբ ստանձնած և չկատարած պարտավորությունների դիմաց: Նման կարգով ձեռք բերված մասնակցությունը Բանկը պետք է օտարի հնարավոր կարճ ժամանակամիջոցում, բայց վեց ամսից ոչ ուշ: Կենտրոնական բանկը, հաշվի առնելով արժեթղթերի շուկայում տիրող իրավիճակը, ինչպես նաև Բանկի ֆինանսական վիճակը, կարող է հիշյալ բաժնետոմսերից առավել բարենպաստ պայմաններով օտարելու նպատակով սույն ենթակետով սահմանված ժամկետը երկարացնել ևս վեց ամսով.

բ) Բանկը մեկ այլ անձի կանոնադրական կապիտալում մասնակցությունը ձեռք է բերել իր հաճախորդի անունից և հաշվին կամ կոմիսիոն հիմունքներով բաժանորդագրական գործունեություն իրականացնելու ընթացքում, եթե ըստ պայմանագրի Բանկը պարտավոր է թողարկողին հատուցել միայն իրացված (տեղաբաշխված) արժեթղթերի արժեքը:

### **3. ԲԱՆԿԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

3.1 Բանկը Հայաստանի Հանրապետությունում և նրա տարածքից դուրս կարող է հիմնել իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, որոնք Հայաստանի Հանրապետության տարածքում հիմնվելու դեպքում գրանցվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս՝ տվյալ երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները:

3.2 Բանկի մասնաճյուղ կամ ներկայացուցչություն ստեղծելու մասին որոշումն ընդունում է Բանկի խորհուրդը: Բանկի մասնաճյուղերը և ներկայացուցչությունները գործում են Բանկի խորհրդի կողմից հաստատված կանոնադրությունների հիման վրա:

3.3 Բանկի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծումը, գրանցումը և գործունեության դադարեցումն իրականացվում է օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.4 Բանկի մասնաճյուղը Բանկի՝ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող և Բանկի գտնվելու վայրից դուրս գտնվող առանձնացված ստորաբաժանում է, որը գործում է Բանկի կողմից տրված լիազորությունների սահմաններում և նրա անունից բանկային գործունեություն և մասնաճյուղի կանոնադրությամբ նախատեսված ֆինանսական գործառնություններ է իրականացնում՝ ինչպես Հայաստանի Հանրապետության դրամով, այնպես էլ արտարժույթով՝ պահպանելով օրենսդրությամբ սահմանված պահանջները:

3.5 Բանկի մասնաճյուղը գործում է Բանկի կողմից տրված լիազորությունների սահմաններում և նրա անունից բանկային գործունեություն և (կամ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ֆինանսական գործառնություններ է իրականացնում, որոնք ամրագրվում են մասնաճյուղի կանոնադրությունում:

3.6 Մասնաճյուղը կարող է իրականացնել նաև ներկայացուցչական գործառնություններ:

3.7 Բանկի ներկայացուցչությունը Բանկի՝ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող և Բանկի գտնվելու վայրից դուրս գտնվող առանձնացված ստորաբաժանումն է, որը ներկայացնում է Բանկը, ուսումնասիրում է ֆինանսական շուկան, Բանկի անունից կնքում է պայմանագրեր, իրականացնում է համանման այլ գործառնություններ: Ներկայացուցչությունը բանկային գործունեություն և «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ֆինանսական գործառնություններ իրականացնելու իրավունք չունի:

#### **4. ԲԱՆԿԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԸ**

4.1 Բանկի կանոնադրական հիմնադրամը պարտատերերի շահերը երաշխավորող Բանկի գույքի նվազագույն չափն է, որը համալրվում է Հայաստանի Հանրապետության արժույթով:

4.2 Բանկի փաստացի համալրված կանոնադրական հիմնադրամը կազմվում է Բանկի բաժնետերերի կողմից ձեռք բերած բաժնետոմսերի անվանական արժեքից:

4.3 Բանկի կանոնադրական հիմնադրամը կազմում է 23 261 150 000 (Քսաներեք միլիարդ երկու հարյուր վաթսուներեկ միլիոն հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, որը բաղկացած է 465 223 հատ տեղաբաշխված սովորական բաժնետոմսերից, յուրաքանչյուրը՝ 50 000 (Հիսուն հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով: Բանկի փաստացի համալրված կանոնադրական հիմնադրամի նվազեցումն արգելվում է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

4.4 Բանկը կարող է թողարկել նաև արտոնյալ անվանական բաժնետոմսեր՝ կանոնադրական հիմնադրամի տասը տոկոսից ոչ ավելի չափով:

4.5 Երկու կամ ավելի անձինք մեկ բաժնետոմսի սեփականատեր հանդիսանալու դեպքում Բանկի նկատմամբ նրանք հանդես են գալիս որպես մեկ բաժնետեր և իրենց իրավունքները կարող են իրականացնել լիազոր ներկայացուցչի միջոցով:

4.6 Բանկն իրավունք ունի համախմբել (կոնսոլիդացնել) տեղաբաշխված բաժնետոմսերը՝ մեծացնելով դրանց անվանական արժեքը, կամ բաժանել դրանք ավելի փոքր անվանական արժեքով բաժնետոմսերի:

4.7 Բանկը կարող է ավելացնել իր կանոնադրական հիմնադրամի չափը Բանկի բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու կամ լրացուցիչ բաժնետոմսեր տեղաբաշխելու միջոցով:

4.8 Բանկի թողարկած բաժնետոմսերի տեղաբաշխումն արտացոլվում է Բանկի բաժնետոմսերի սեփականատերերի ռեեստրում՝ օրենքով սահմանված կարգով:

4.9 Բանկի բաժնետոմսերի սեփականատերերի ռեեստրի վարումն իրականացվում է օրենսդրությամբ սահմանված կարգով՝ մասնագիտացված կազմակերպության կողմից:

4.10 Բանկը կարող է թողարկել բաժնետոմսեր, պարտատոմսեր, մուրհակներ և այլ արժեթղթեր՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.11 Բանկում ստեղծվում է պահուստային հիմնադրամ՝ օրենսդրությամբ սահմանված չափերով և ժամկետներում:

4.12 Բանկի պահուստային հիմնադրամի չափը կազմում է կանոնադրական հիմնադրամի 15 տոկոսը: Պահուստային հիմնադրամը ձևավորվում է Բանկի շահույթից տարեկան մասհանումների միջոցով: Եթե պահուստային հիմնադրամը կազմում է սահմանված նվազագույն չափից ավելի փոքր մեծություն, ապա հատկացումներն այդ հիմնադրամին կատարվում են շահույթից՝ առնվազն հինգ տոկոսի չափով:

4.13 Պահուստային հիմնադրամն օգտագործվում է Բանկի կրած կորուստները (վնասները) ծածկելու, ինչպես նաև Բանկի թողարկած պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Բանկի շահույթը և այլ միջոցները դրա համար բավարար չեն:

4.14 Բանկն իրավական ակտերով սահմանված կարգով ստեղծում է ներդրումային արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստ, վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստ, օրենսդրությամբ նախատեսված այլ պարտադիր պահուստներ:

4.15 Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ կարող են ստեղծվել նաև այլ հիմնադրամներ:

## **5. ԲԱՆԿԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՈՒՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼԸ ԵՎ ԴՐԱ ՍԱՀՄԱՆԱՓՎԱԿՈՒՄՆԵՐԸ**

5.1 Բանկի բաժնետերերն օրենքով և Կանոնադրությամբ սահմանված կարգով ցանկացած ժամանակ կարող են օտարել իրենց պատկանող բաժնետոմսերը:

5.2 Բաժնետիրոջ կողմից բաժնետոմսերի օտարումն իրականացվում է՝ հաշվի առնելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Բանկի կանոնադրական հիմնադրամում այլ մասնակցություն ձեռք բերելու սահմանափակումները:

5.3 Բանկի բաժնետերերն ունեն Բանկի այլ բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք՝ իրենց պատկանող բաժնեմասին համամասնորեն:

5.4 Բանկի բաժնետերը ծանուցման նամակով տեղեկացնում է Բանկի այլ բաժնետերերին իր բաժնետոմսերը վաճառելու մտադրության մասին:



Այդ նպատակով բաժնետերերն իրենց պատկանող բաժնետոմսերն օտարելու մտադրության մասին գրավոր ձևով հայտնում են Բանկի խորհրդի նախագահին: Բանկի խորհրդի նախագահը պարտավոր է գրությունը Բանկ մուտքագրվելու պահից հնգօրյա ժամկետում տեղեկացնել Բանկի մյուս բաժնետերերին Կանոնադրությամբ Ընդհանուր ժողովի գումարման համար սահմանված ծանուցման կարգով:

Բաժնետերերի նախապատվության իրավունքի իրականացման ժամկետը սահմանվում է տեղեկացման պահից սկսած 45 օր տևողությամբ:

5.5 Եթե օրենքով և Կանոնադրության 5.4 կետով սահմանված ժամկետում բաժնետերերից ոչ մեկը չի օգտվում նախապատվության իր իրավունքից, ապա բաժնետոմսերը կարող են օտարվել երրորդ անձանց:

5.6 Բանկի բաժնետերերը (սովորական բաժնետոմսերի սեփականատերերը) Բանկի կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերի և բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի ձեռքբերման նախապատվության իրավունք ունեն, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Նշված նախապատվության իրավունքը բաժնետերերն իրականացնում են համապատասխան տեղաբաշխման մասին իրենց ծանուցելու պահից 10 օրվա ընթացքում:

5.7 Բանկի քվեարկող բաժնետոմսերի սեփականատերեր հանդիսացող բաժնետերերը պետք է Ընդհանուր ժողովի գումարման մասին սահմանված կարգով Բանկի դրամական վճարման ենթակա քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխումը սկսվելու օրվանից առնվազն 30 օր առաջ ծանուցվեն նախապատվության իրավունքի՝ իրենց կողմից իրականացման հնարավորության մասին:

5.8 Ծանուցումը պետք է տեղեկություններ պարունակի՝

ա) տեղաբաշխվող քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի քանակի մասին.

բ) տեղաբաշխվող քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխման գնի (այդ թվում՝ տեղաբաշխվող քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի ձեռքբերման նախապատվության իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի համար տեղաբաշխման գնի) մասին.

գ) Բանկի բաժնետերերի կողմից նախապատվության իրավունքով ձեռք բերվող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի քանակի որոշման կարգի, ինչպես նաև այդ իրավունքի իրականացման կարգի և ժամկետների մասին:

5.9 Բաժնետերերն իրավունք ունեն իրականացնել իրենց նախապատվության իրավունքը լրիվ ծավալով կամ մասնակիորեն՝ քվեարկող բաժնետոմսերի կամ քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի ձեռքբերման մասին Բանկին գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով, որը պետք է բովանդակի՝

ա) բաժնետիրոջ լրիվ ֆիրմային անվանումը (ֆիզիկական անձի համար՝ անունը), պետական գրանցման տվյալները (անձնագրային տվյալները), գտնվելու (բնակության) վայրը.

բ) ձեռք բերվող բաժնետոմսերի և (կամ) արժեթղթերի քանակը.

գ) բաժնետոմսերի և (կամ) արժեթղթերի դիմաց վճարման մասին փաստաթուղթը:

5.10 Ծանուցումը պետք է ներկայացվի Բանկի քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխումն սկսելու օրվանից ոչ ուշ, քան մեկ օր առաջ:

5.11 Բանկի կանոնադրական հիմնադրամի բաժնեմասերը անցնում են Բանկի բաժնետեր իրավաբանական անձանց իրավահաջորդներին և բաժնետեր ֆիզիկական անձանց ժառանգներին:

5.12 Անձը կամ փոխկապակցված անձինք մեկ կամ մի քանի գործարքների հետևանքով Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերելիս պարտավոր են դիմել Կենտրոնական բանկ՝ վերջինիս նախնական համաձայնությունը ստանալու նպատակով:

5.13 Անձը կամ նրա հետ փոխկապակցված անձինք չեն կարող ձեռք բերել Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն, եթե՝

ա) անձը դիտավորությամբ կատարված հանցագործություն կատարելու համար դատվածություն ունի,

բ) անձն օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով զրկվել է ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից,

գ) անձը սնանկ է ճանաչվել և չմարված (չներված) պարտավորություններ ունի,

դ) անձի գործողությունները նախկինում հանգեցրել են Բանկի կամ այլ անձի սնանկացմանը,

ե) տվյալ անձը կամ փոխկապակցված անձինք անցյալում կատարել են այնպիսի արարք, որը Կենտրոնական բանկի հաստատած ուղեցույցով հիմնավորված՝ Կենտրոնական բանկի կարծիքով հիմք է տալիս կասկածելու, որ տվյալ անձի՝ որպես Բանկի բարձրագույն կառավարման մարմնի որոշումների կայացման ժամանակ ձայնի իրավունք ունեցող անդամի, գործողությունները կարող են հանգեցնել Բանկի սնանկացման կամ ֆինանսական վիճակի վատթարացման, կամ հեղինակության և գործարար համբավի վարկաբեկման,

զ) տվյալ գործարքն ուղղված է կամ հանգեցնում է, կամ կարող է հանգեցնել ազատ տնտեսական մրցակցության սահմանափակմանը,

է) տվյալ գործարքի հետևանքով Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձը և նրա հետ փոխկապակցված անձինք Հայաստանի Հանրապետության բանկային շուկայում տվյալ գործարքի հետևանքով ձեռք են բերում գերիշխող դիրք, որն իրեն հնարավորություն է տալիս կանխորոշել «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով սահմանված գործառնությունների կամ դրանցից թեկուզ մեկի շուկայական սակագները կամ պայմանները,

ը) փաստաթղթերը ներկայացվել են Կենտրոնական բանկի սահմանած ձևի և կարգի խախտումներով, կամ ներկայացված փաստաթղթերում կամ տեղեկություններում արտացոլվել են կեղծ կամ անարժանահավատ տեղեկություններ,

թ) տվյալ գործարքի հետևանքով Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերող մասնակիցը կամ նրա հետ փոխկապակցված անձը Կենտրոնական Բանկի հիմնավոր կարծիքով գտնվում է ֆինանսական վատ վիճակում կամ նշանակալից մասնակցի կամ նրա հետ փոխկապակցված անձանց ֆինանսական վիճակի վատթարացումը կարող է պատճառ հանդիսանալ Բանկի ֆինանսական վիճակի վատթարացման, կամ Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձանց և նրանց հետ փոխկապակցված անձանց գործունեությունը կամ Բանկի հետ նրանց փոխհարաբերությունների բնույթը Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով կարող է խոչընդոտել Կենտրոնական բանկի կողմից արդյունավետ վերահսկողության իրականացմանը կամ թույլ չի տալիս բացահայտելու կամ արդյունավետ կառավարելու Բանկի ռիսկերը,

ժ) անձը չի ներկայացնում իր կողմից ներդրվող միջոցների ծագման օրինականության վերաբերյալ բավարար և ամբողջական հիմնավորումներ:

5.14 Առանց Կենտրոնական բանկի նախնական համաձայնության, Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցության ձեռքբերման պայմանագիրն առ ոչինչ է:

5.15 Բանկի բաժնետոմսերի օտարումը երրորդ անձանց կատարվում է օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.16 Անձը կամ փոխկապակցված անձինք մեկ կամ մի քանի գործարքների հետևանքով Բանկի կանոնադրական հիմնադրամում այլ մասնակցություն (Բանկի նշանակալից մասնակցից ձեռք բերվող մասնակցություն, որի արդյունքում Բանկի նշանակալից մասնակցի մասնակցությունը Բանկում նվազում է) կարող են ձեռք բերել միայն Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ: Ընդ որում, Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը պահանջվում է յուրաքանչյուր գործարքի կամ գործարքների իրականացման դեպքում, որոնց արդյունքում Բանկում նշանակալից մասնակցություն ունեցող անձի մասնակցության չափը Բանկի կանոնադրական հիմնադրամում կնվազի համապատասխանաբար 75, 50, 25 կամ 10 տոկոսից:

5.17 Առանց Կենտրոնական բանկի նախնական համաձայնության այլ մասնակցության ձեռքբերման պայմանագիրն առ ոչինչ է:

5.18 Անձը կամ փոխկապակցված անձինք չեն կարող ձեռք բերել այլ (ոչ նշանակալից) մասնակցություն, եթե առկա է Կանոնադրության 5.13 կետով նախատեսված կամ հետևյալ հիմքերից մեկը՝

ա) կխախտվեն Բանկի հիմնական տնտեսական նորմատիվները,

բ) Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի խորհրդի հաստատած ուղեցույցով հիմնավորված՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կարծիքով հիմքեր կան կասկածելու, որ գործարքի հետևանքով կարող են առաջ գալ Բանկի ֆինանսական վիճակի վատթարացման, հեղինակության կամ գործարար համբավի վարկաբեկման միտումներ:

## 6. ԲԱՆԿԻ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԸ

6.1 Բանկի բաժնետերեր կարող են լինել ֆիզիկական և իրավաբանական անձինք:

6.2 Բանկի յուրաքանչյուր սովորական բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքները:

6.3 Բանկի սովորական բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերն իրավունք ունի՝

ա) մասնակցել Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով,

բ) Կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցել Բանկի կառավարմանը,

գ) ստանալ շահութաբաժիններ՝ Բանկի գործունեությունից առաջացած զուտ շահույթից,

դ) օրենսդրությամբ սահմանված կարգով առաջնահերթ ձեռք բերել Բանկի կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը,

ե) ստանալ Բանկի գործունեության վերաբերյալ օրենսդրությամբ նախատեսված տեղեկատվություն,

զ) Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովում իր շահերը ներկայացնելու համար օրենքով սահմանված կարգով լիազորել երրորդ անձի,

է) հանդես գալ առաջարկություններով Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովում.

ը) Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովում ունենալ իր բաժնետոմսերին համապատասխան ձայների քանակ՝ ղեկավարվելով «մեկ բաժնետոմսը՝ մեկ ձայն» սկզբունքով, բացառությամբ Խորհրդի անդամների ընտրության և օրենքով նախատեսված այլ դեպքերի, երբ կիրառվում է կումուլյատիվ/գումարային/ քվեարկության սկզբունքը,

թ) դիմել դատարան Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին ու այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով.

ժ) Բանկի լուծարման դեպքում ստանալ Բանկի գույքի իր հասանելիք մասը.

ժա) Բանկի շահույթի հաշվին Բանկի կանոնադրական հիմնադրամի ավելացման դեպքում անվճար ստանալ բաժնեմասին համապատասխան քանակությամբ սովորական բաժնետոմսեր.

ժբ) օրենսդրությամբ սահմանված կարգով օտարել կամ այլ ձևով այլ անձանց փոխանցել իր սեփականությունը հանդիսացող բաժնետոմսը.

ժգ) օգտվել օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

6.4 Բանկի բաժնետերը պարտավոր է՝

1) չհրապարակել Բանկի գործունեության վերաբերյալ գաղտնիք կազմող տեղեկությունները,

2) կատարել Բանկի կանոնադրությամբ նախատեսված պահանջները, բաժնետերերի ընդհանուր ժողովի և խորհրդի որոշումները,

3) կատարել իր պարտականությունները Բանկի առջև,

4) ձեռնպահ մնալ այն բոլոր գործողություններից, որոնք կարող են վնաս պատճառել Բանկի շահերին,

5) կատարել Կանոնադրությամբ և օրենսդրությամբ նախատեսված այլ պարտավորություններ:

## **7. ԲԱՆԿԻ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՈՒՄԸ**

7.1 Բանկի գործունեության արդյունքում ստացված շահույթը ենթակա է հարկման՝ գործող օրենսդրության համաձայն:

7.2 Օրենսդրությամբ սահմանված հարկերը, պարտադիր այլ վճարները կատարելուց և Կանոնադրությամբ նախատեսված հիմնադրամները համալրելուց հետո շահույթի մնացած մասը բաշխվում է Բանկի բաժնետերերի միջև՝ կանոնադրական հիմնադրամում նրանց ունեցած բաժնեմասին համապատասխան, եթե Բանկի ընդհանուր ժողովն այլ որոշում չի կայացրել:

7.3 Բանկն իրավունք չունի շահութաբաժիններ հայտարարել և վճարել, եթե Բանկի զուտ ակտիվների արժեքը պակաս է նրա կանոնադրական հիմնադրամից կամ շահութաբաժիններ վճարելու արդյունքում կապկասի դրա չափից:

Բանկի բաժնետերերին շահութաբաժիններ բաշխելն արգելվում է, եթե դրանք բաշխելու պահին Բանկի կրած կորուստները (վնասները) հավասար են այդ պահին Բանկում առկա չբաշխված զուտ շահույթի գումարին կամ գերազանցում են այն, ինչպես նաև օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

7.4 Կենտրոնական բանկը կարող է սահմանափակել Բանկի կողմից շահութաբաժիններ բաշխելը, այդ թվում՝ արտոնյալ բաժնետերերին կամ Բանկի այլ մասնակիցների այլ ձևով որևէ եկամուտներ (հատուցումներ) վճարելը, եթե՝

ա) շահութաբաժինների բաշխումը կհանգեցնի կամ կարող է հանգեցնել Բանկի ֆինանսական վիճակի վատթարացման, և (կամ)

բ) շահութաբաժինների բաշխման հետևանքով Բանկը խախտում է կամ կարող է խախտել առնվազն մեկ տնտեսական նորմատիվ, և (կամ)

գ) Բանկը խախտել է կամ շահութաբաժինների բաշխման արդյունքում կխախտի հիմնական տնտեսական նորմատիվների սահմանաչափերից բարձր (ցածր) սահմանված շեմը (շեմերը):

7.5 Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավունք ունի որոշում ընդունելու բաժնետերերին տարեկան շահութաբաժինների վճարման կամ շահութաբաժիններ չվճարելու մասին:

7.6 Տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը՝ խորհրդի առաջարկությամբ:

7.7 Տարեկան շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի՝ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ:

7.8 Շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար խորհուրդը կազմում է շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակ, որում պետք է ընդգրկվեն Բանկի այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ:

7.9 Բանկը շահութաբաժինների վճարման մասին նախապես ծանուցում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին՝ վերջինիս կողմից սահմանված կարգով:

## **8. ԲԱՆԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ**

Բանկի կառավարման մարմիններն են՝

- Բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ նաև՝ Ընդհանուր ժողով),
- Բանկի խորհուրդը,
- Բանկի կոլեգիալ գործադիր մարմինը՝ Վարչությունը կամ Տնօրինությունը,
- Բանկի միանձնյա գործադիր մարմինը՝ Գործադիր տնօրեն-Վարչության

նախագահը:

### **8.1 Բանկի Ընդհանուր ժողովը**

8.1.1 Բանկի Ընդհանուր ժողովը Բանկի կառավարման բարձրագույն մարմինն է:

8.1.2 Բանկը պարտավոր է ամեն տարի գումարել տարեկան Ընդհանուր ժողով: Տարեկան Ընդհանուր ժողովը գումարվում է Բանկի հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում:

8.1.3 Ընդհանուր ժողովները կարող են գումարվել հերթական կամ արտահերթ: Տարեկան Ընդհանուր ժողովից բացի գումարվող ժողովները համարվում են արտահերթ:

8.1.4 Արտահերթ Ընդհանուր ժողովները գումարվում են Բանկի խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, Գործադիր տնօրեն-Վարչության նախագահի, Բանկի աուդիտն անցկացնող անձի, ժողովի գումարման պահանջը ներկայացնելու դրությամբ Բանկի առնվազն 10 տոկոս ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով՝ անհետաձգելի հարցերի քննարկման համար:

8.1.5 Ընդհանուր ժողովի անցկացման տարին, ամիսը, ամսաթիվն ու կարգը, ինչպես նաև բաժնետերերին ժողովի անցկացման մասին ծանուցման կարգը, բաժնետերերին տրամադրվող նյութերի ցանկը սահմանում է խորհուրդը՝ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Ժողովն իրավունք չունի փոփոխել օրակարգը, ինչպես նաև որոշումներ ընդունել օրակարգում չընդգրկված հարցերի վերաբերյալ:

8.1.6 Բանկի Ընդհանուր ժողովում բոլոր որոշումներն ընդունվում են բաց կամ փակ քվեարկությամբ «1 բաժնետոմսը՝ 1 ձայն» սկզբունքով, բացառությամբ խորհրդի անդամների ընտրության և օրենքով նախատեսված այլ դեպքերի, երբ կիրառվում է կումուլյատիվ (գումարային) քվեարկության սկզբունքը:

8.1.7 Բաժնետերերը կարող են իրենց ձայնի իրավունքը լիազորագրով հանձնել մեկ այլ անձի:

8.1.8 Ընդհանուր ժողովն իրավասու է որոշումներ ընդունել (քվորում ունի) այն դեպքում, երբ ժողովին մասնակցում են համատեղ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի կեսից ավելին (50 տոկոս + 1 ձայն) տիրապետող բաժնետերերը կամ նրանց լիազոր ներկայացուցիչները:

8.1.9 Քվորումի բացակայության դեպքում 15 օր հետո հրավիրվում է նոր Ընդհանուր ժողով, որը համարվում է իրավազոր, եթե Ընդհանուր ժողովին ներկա են համատեղ Բանկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 30 տոկոսից ավելին (30 տոկոս + 1 ձայն) սիրապետող բաժնետերեր կամ նրանց լիազոր ներկայացուցիչներ:

8.1.10 Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

ա) Բանկի կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը (կատարվում է բաժնետերերի ժողովում ներկա գտնվող ձայների երեք քառորդով):

բ) Բանկի վերակազմակերպման մասին որոշում ընդունելը (ընդունվում է բաժնետերերի ժողովում ներկա գտնվող ձայների երեք քառորդով):

գ) Բանկի լուծարումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը, ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը (ընդունվում է բաժնետերերի ժողովում ներկա գտնվող ձայների երեք քառորդով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների երկու երրորդից):

դ) Բանկի խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Բանկի խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես Բանկի տարեկան ընդհանուր ժողովներում: Բանկի խորհրդի անդամների ընտրության հարցը Բանկի արտահերթ ընդհանուր ժողովներում կարող է քննարկվել, եթե արտահերթ Ընդհանուր ժողովը որոշում է ընդունել Բանկի խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:

ե) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը, ինչպես նաև Բանկի կանոնադրական հիմնադրամի ավելացումը (ընդունվում է բաժնետերերի ժողովում ներկա գտնվող ձայների երեք քառորդով):

զ) Խորհրդի ներկայացմամբ Բանկի արտաքին աուդիտն անցկացնող անձի հաստատումը,

է) Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը: Տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը,

ը) Ընդհանուր ժողովի վարման կարգի հաստատումը,

թ) օրենքով սահմանված դեպքերում՝ գործարքների կնքումը, որում առկա է շահագրգռվածություն,

ժ) օրենքով սահմանված դեպքերում՝ Բանկի գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը (Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 տոկոսից ավելին) (ընդունվում է բաժնետերերի ժողովում ներկա գտնվող ձայների երեք քառորդով),

ժա) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման ճանապարհով Բանկի կանոնադրական հիմնադրամի չափի ավելացումը,

ժբ) բաժնետոմսերի համախմբումն ու բաժանումը,

ժգ) հաստատված օրակարգի շրջանակում օրենքով նախատեսված այլ հարցեր:

8.1.11 Ընդհանուր ժողովում որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող բաժնետերերի ձայների պարզ մեծամասնությամբ, եթե Կանոնադրությամբ, Բանկի ներքին իրավական ակտերով և օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

8.1.12 Ընդհանուր ժողովի որոշումները կարող են նաև ընդունվել հեռակա քվեարկության (հարցման) միջոցով, բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի: Հեռակա կարգով քվեարկության ժամանակ քվեաթերթիկները պետք է տրամադրվեն բաժնետերերին՝ Բանկի կողմից լրացված քվեաթերթիկների ընդունումն ավարտելու պահից առնվազն 30 օր առաջ: Տարեկան Ընդհանուր ժողովը չի կարող անցկացվել հեռակա կարգով քվեարկության (հարցման) միջոցով:

8.1.13 Ընդհանուր ժողովի որոշումները կարող են ընդունվել այնպիսի նիստով, որի ժամանակ Ընդհանուր ժողովի մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի միջոցով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում:

8.1.14 Ընդհանուր ժողով հրավիրելու մասին հայտարարությունը տրվում է Բանկի ինտերնետային էջում ժողովի գումարումից ոչ ուշ, քան 15 օր առաջ, իսկ հեռակա քվեարկությամբ Ընդհանուր ժողով հրավիրելու մասին հայտարարությունը՝ ոչ ուշ, քան 35 օր առաջ: Բանկի բաժնետերերը ընդհանուր ժողովի մասին կարող են ծանուցվել նաև պատվիրված նամակներով, ֆաքսով կամ էլեկտրոնային տարբերակով:

8.1.15 Ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի առնվազն 2 տոկոսի սեփականատեր հանդիսացող բաժնետերերն (բաժնետերերն) իրավունք ունի (ունեն) ֆինանսական տարվա ավարտից հետո 30 օրվա ընթացքում գրավոր ներկայացնել տարեկան Ընդհանուր ժողովի օրակարգի վերաբերյալ երկուսից ոչ ավել առաջարկություններ: Այդ նույն ժամկետում առնվազն տասը տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերեր (բաժնետերերը) իրավունք ունի (ունեն) պահանջելու օրակարգի մեջ մտցնել իրեն(ց) հետաքրքրող հարց(եր)ը:

8.1.16 Ընդհանուր ժողովն արձանագրվում է: Բաժնետերերի պահանջով նրանց տրվում է Ընդհանուր ժողովի արձանագրության պատճենը կամ քաղվածք արձանագրությունից:

## **8.2 Բանկի խորհուրդը**

8.2.1 Բանկի խորհուրդն իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ օրենքով և Կանոնադրությամբ Խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում:

8.2.2 Բանկի խորհուրդը պետք է կազմված լինի առնվազն 5 և առավելագույնը 10 անդամից, որոնք ընտրվում են Բանկի տարեկան Ընդհանուր ժողովի կողմից, իսկ Բանկի խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում՝ արտահերթ Ընդհանուր ժողովում Բանկի ներկա մասնակիցների կողմից՝ առնվազն մեկ տարի ժամկետով՝ օրենքով և Կանոնադրությամբ սահմանված կարգով: Խորհրդի անդամներ կարող են լինել ինչպես Բանկի բաժնետերերը, այնպես էլ բաժնետեր չհանդիսացող ֆիզիկական գործունակ անձինք:

8.2.3 Բանկի խորհրդի անդամների ընտրությունները կարող են իրականացվել գումարային քվեարկությամբ:



8.2.4 Բանկի բաժնետերերը, որոնք Բանկի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու ամսաթվի դրությամբ տիրապետում են Բանկի ձայնի իրավունք տվող տեղաբաշխված բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընգրկվել Բանկի խորհրդի կազմում կամ խորհրդի կազմում նշանակել իրենց ներկայացուցչին:

8.2.5 Բանկի այն մասնակիցները, որոնք Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի մինչև 10 տոկոսին, կարող են միավորվել և Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսը համալրելու դեպքում՝ առանց Ընդհանուր ժողովի կողմից ընտրության օրենսդրությամբ սահմանված կարգով ընդգրկել իրենց ներկայացուցչին Բանկի խորհրդի կազմում:

Նշված ձևով ներկայացուցչի ընդգրկումը խորհրդի կազմում հնարավոր է միայն Բանկի մասնակիցների խմբի ստեղծման մասին համապատասխան պայմանագրի առկայության և այդ պայմանագրի վերաբերյալ Ընդհանուր ժողովին տեղեկացնելու դեպքում:

Պայմանագիրը պետք է պարունակի հետևյալ պայմաններն ու տեղեկությունները.

ա) Բանկի միավորվող մասնակիցների վերաբերյալ տվյալներ, ներառյալ՝ նրանց պատկանող Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի քանակը.

բ) միավորվող մասնակիցների կողմից առաջարկվող խորհրդի անդամի թեկնածուի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները.

- ազգանունը, անունը, ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը.

- մասնագիտությունը և կրթությունը.

- վերջին 10 տարվա ընթացքում զբաղեցրած պաշտոնները.

- տվյալ պաշտոնում (ընտրվելու) նշանակվելու տարին, ամիսը, ամսաթիվը և պաշտոնից ազատվելու տարին, ամիսը, ամսաթիվը.

- տվյալ պաշտոնում վերընտրվելու քանակը.

- Բանկի մասնակից հանդիսացող խորհրդի անդամին, գործադիր տնօրենին, գլխավոր հաշվապահին կամ խորհրդի անդամի թեկնածուին և նրանց հետ փոխկապակցված անձանց պատկանող՝ Բանկի քվեարկող բաժնետոմսերի քանակը.

- տեղեկություններ այն իրավաբանական անձանց մասին, որոնցում տվյալ անձը զբաղեցնում է ղեկավար պաշտոններ.

- փոխհարաբերությունների բնույթը Բանկի և Բանկի հետ կապված անձանց հետ.

- անհրաժեշտության դեպքում՝ այլ տվյալներ:

գ) պայման այն մասին, որ պայմանագիրը կնքվում է առնվազն մեկ տարի ժամկետով և մինչև այդ ժամկետի ավարտը փոփոխման կամ լուծման ենթակա չէ.

դ) միավորվող մասնակիցների հայեցողությամբ՝ այլ պայմաններ:

Պայմանագրի պատճենները տրամադրվում են Ընդհանուր ժողովի բոլոր մասնակիցներին՝ Ընդհանուր ժողովի կայացման, իսկ հեռակա կարգով քվեարկության դեպքում՝ լրացրած քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունելու համար սահմանված ժամկետի վերջին օրվանից առնվազն 30 օր առաջ:

8.2.6 Բանկի կանոնադրական հիմնադրամում օրենսդրությամբ սահմանված փոքր մասնակցություն ունեցող մասնակիցներն իրավունք ունեն իրենց շահերը ներկայացնող ներկայացուցչին առանց Ընդհանուր ժողովի կողմից ընտրության օրենսդրությամբ նախատեսված կարգով ընդգրկելու Բանկի խորհրդի կազմում:

8.2.7 Խորհրդի անդամները չպետք է միմյանց հետ փոխկապակցված լինեն: Խորհրդի անդամները և Բանկի գործադիր մարմնի (Վարչության) անդամները չեն կարող լինել միմյանց հետ փոխկապակցված անձինք:

8.2.8 Բանկի խորհրդի նախագահը կամ խորհրդի անդամը չի կարող միաժամանակ լինել Բանկի գործադիր մարմնի (Վարչության) անդամ կամ այլ աշխատող, ինչպես նաև այլ բանկի կամ վարկային կազմակերպության խորհրդի անդամ, գործադիր մարմնի անդամ կամ այլ աշխատող, բացառությամբ, եթե Բանկը և այլ բանկը կամ վարկային կազմակերպությունը հանդիսանում են միմյանց հետ փոխկապակցված անձինք:

8.2.9 Բանկի խորհրդի իրավասություններն են՝

ա) Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ՝ Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը,

բ) Ընդհանուր ժողովի տարեկան և արտահերթ նիստերի գումարումը, օրակարգի հաստատումը, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված՝ նախապատրաստական աշխատանքների իրականացման ապահովումը.

գ) Բանկի գործադիր մարմնի՝ Վարչության (Տնօրինության) ձևավորումը, նրա անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.

դ) Բանկում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ձևավորումը, նրա տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, Ներքին աուդիտի աշխատողների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.

ե) Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի ու կատարողականի հաստատումը.

զ) Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը.

է) Բանկի կանոնադրական հիմնադրամի ավելացումը, եթե Ընդհանուր ժողովի որոշմամբ նրան տրված է այդպիսի լիազորություն.

ը) շահութաբաժինների վճարման վերաբերյալ Ընդհանուր ժողովին առաջարկությունների ներկայացումը, այդ թվում՝ շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող Բանկի մասնակիցների ցուցակի կազմումը, որում պետք է ընդգրկվեն Բանկի այն մասնակիցները, որոնք ընդգրկվել են Բանկի մասնակիցների ռեեստրում՝ Բանկի տարեկան Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ.

թ) Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և Ընդհանուր ժողովին ներկայացումը.

ժ) Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի ներկայացումը Ընդհանուր ժողովի հաստատմանը.

ժա) Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին վճարման չափի սահմանումը.

ժբ) Բանկում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում անհրաժեշտության դեպքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը.

ժգ) Բանկի կողմից «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ֆինանսական գործառնությունների իրականացման կարգը սահմանող ներքին իրավական ակտերի ընդունումը.

ժդ) Բանկի տարածքային և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատումը, Բանկի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառնության պարտականությունների բաշխումը.

ժե) դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը.

ժզ) դուստր կամ կախյալ ընկերություններին մասնակցությունը.

ժէ) առևտրային կազմակերպությունների միությունների հիմնադրումը.

ժը) առևտրային կազմակերպությունների միություններում մասնակցությունը.

ժթ) Խորհրդի անդամների վարձատրության չափի սահմանումը.

ի) Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունումը.

իա) Բանկի պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.

իբ) Բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը.

իգ) Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի սահմանումը.

իդ) Բանկի գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը (Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-50 տոկոսի չափով).

իե) օրենքով սահմանված դեպքերում՝ գործարքների կնքումը, որում առկա է շահագրգռվածություն.

իզ) օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ որոշումների ընդունումը, իրավասությունների իրականացումը:

8.2.10 Բանկի խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երկու ամիսը մեկ անգամ: Բանկի խորհրդի նիստերը գումարում է Խորհրդի նախագահը՝ իր, Խորհրդի անդամի, Գործադիր տնօրեն-Վարչության նախագահի, Վարչության (Տնօրինության), Ներքին աուդիտի ղեկավարի, Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի, Կենտրոնական բանկի խորհրդի, ինչպես նաև Բանկի քվեարկող բաժնետոմսերի հինգ կամ ավելի տոկոս ունեցող մասնակցի (մասնակիցների) գրավոր պահանջով:

8.2.11 Բանկի խորհուրդն առնվազն տարին մեկ անգամ իր նիստում պետք է քննարկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաշվետվությունը (նամակ ղեկավարությանը), ինչպես նաև քննարկի և անհրաժեշտության դեպքում վերանայի Բանկի գործունեության հիմնական ուղղությունները, ռազմավարությունը, կարգերն ու ներքին իրավական այլ ակտերը:

8.2.12 Բանկի խորհուրդը առնվազն եռամսյակը մեկ անգամ պետք է քննարկի Բանկի ներքին աուդիտի, Վարչության (Տնօրինության) և գլխավոր հաշվապահի հաշվետվությունները՝ իր սահմանած կարգով և ձևով:

8.2.13 Խորհրդի նիստերի գումարման և անցկացման կարգը սահմանվում է Ընդհանուր ժողովի կողմից հաստատված Խորհրդի գործունեության կանոնակարգով:

8.2.14 Խորհրդի նիստերում Խորհրդի անդամներն ունեն հավասար՝ մեկ ձայնի իրավունք: Խորհրդի նիստում ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցում Խորհրդի մեկ անդամից մյուսին չի թույլատրվում:

8.2.15 Բանկի խորհուրդը կարող է որոշումներ ընդունել նաև հեռակա քվեարկությամբ (հարցման միջոցով)՝ բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի: Հեռակա կարգով քվեարկության ժամանակ քվեաթերթիկները պետք է տրամադրվեն Խորհրդի անդամներին՝ լրացված քվեաթերթիկների ընդունումն ավարտելու պահից առնվազն 7 օր առաջ:

8.2.16 Խորհուրդը կարող է որոշումներ ընդունել այնպիսի նիստում, որի ժամանակ Խորհրդի նիստի բոլոր մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային կապի, հեռուստակապի կամ կապի այլ միջոցներով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում:

8.2.17 Բանկի խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա Խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, եթե օրենսդրությամբ ձայների ավելի մեծ քանակություն նախատեսված չէ: Ձայների հավասարության դեպքում նախագահի ձայնը վճռորոշ է: Բանկի խորհրդի նիստերը համարվում են իրավազոր, եթե մասնակցում են Խորհրդի անդամներից ոչ պակաս, քան կեսը:

8.2.18 Բանկի խորհուրդն իր աշխատանքն արդյունավետ կազմակերպելու նպատակով կարող է ստեղծել հանձնաժողովներ: Բանկի խորհրդին կից հանձնաժողովներում կարող են ընդգրկվել Բանկի խորհրդի անդամները և Բանկի այլ ղեկավարներ կամ աշխատողներ: Բանկի խորհրդին կից հանձնաժողովների որոշումներն ունեն խորհրդակցական բնույթ:

8.2.19 Բանկի խորհրդի նախագահը

ա) Բանկի խորհրդի նախագահն ընտրվում է Բանկի խորհրդի անդամների կողմից, Խորհրդի անդամների կազմից՝ Բանկի Խորհրդի անդամների ընդհանուր քանակի ձայների մեծամասնությամբ: Բանկի խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները կատարում է Խորհրդի՝ տարիքով ավագ անդամը կամ Խորհրդի որոշմամբ՝ այլ անդամ:

բ) Բանկի Խորհրդի նախագահը՝

- կազմակերպում է Խորհրդի աշխատանքները,
- գումարում և նախագահում է Խորհրդի նիստերը,
- կազմակերպում է Խորհրդի նիստերի արձանագրության վարումը,
- նախագահում է Բանկի ընդհանուր ժողովում,
- իրականացնում է օրենքներով և այլ իրավական ակտերով (այդ թվում՝ Բանկի ներքին իրավական ակտերով) նախատեսված այլ լիազորություններ:

**8.3 Բանկի Վարչությունը** (Տնօրինությունը)

8.3.1 Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Բանկի գործադիր մարմինը՝ Վարչությունը (Տնօրինությունը): Բանկի Վարչության (Տնօրինության)

կառուցվածքում պարտադիր ընդգրկվում են Բանկի Գործադիր տնօրեն-Վարչության նախագահը, նրա տեղակալը (տեղակալները), գլխավոր հաշվապահը:

8.3.2 Բանկի Գործադիր տնօրեն-Վարչության նախագահը նշանակվում է Բանկի խորհրդի կողմից, իսկ Գործադիր տնօրեն-Վարչության նախագահի տեղակալները, գլխավոր հաշվապահը և Վարչության (Տնօրինության) այլ անդամները՝ Բանկի խորհրդի կողմից՝ Գործադիր տնօրեն-Վարչության նախագահի ներկայացմամբ:

8.3.3 Բանկի Գործադիր տնօրեն-Վարչության նախագահը, Գործադիր տնօրեն-Վարչության նախագահի տեղակալը, գլխավոր հաշվապահը, Վարչության (Տնօրինության) անդամները չեն կարող միաժամանակ լինել այլ Բանկի գործադիր տնօրեն, գործադիր տնօրենի տեղակալ, գլխավոր հաշվապահ, տնօրինության անդամ, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավար կամ անդամներ:

8.3.4 Բանկի Վարչության (Տնօրինության) անդամները բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքներից, կարող են կատարել վճարովի այլ աշխատանք միայն Բանկի խորհրդի համաձայնությամբ:

8.3.5 Բանկի Վարչության (Տնօրինության) իրավասությունների մեջ են մտնում Բանկի գործունեության հետ կապված բոլոր հարցերը, բացառությամբ այն հարցերի, որոնք վերաբերում են Ընդհանուր ժողովի կամ Բանկի խորհրդի իրավասությանը:

8.3.6 Բանկի Վարչության (Տնօրինության) իրավասություններ են՝

ա) Բանկի խորհրդի կողմից հաստատվող ներքին իրավական ակտերի, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերի, Բանկի վարչակազմակերպական կառուցվածքի ներկայացումը Խորհրդի հաստատմանը,

բ) Ընդհանուր ժողովի և Խորհրդի որոշումների կատարման ապահովումը,

գ) Բանկի ծախսերի ամենամյա նախահաշվի ներկայացումը Խորհրդի հաստատմանը,

դ) Խորհրդի կողմից հաստատված ծախսերի նախահաշվի շրջանակներում Բանկի, այդ թվում՝ տարածքային ստորաբաժանումների հաստիքացուցակների հաստատումը,

ե) Օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված՝ Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարման հետ կապված այլ իրավասությունների իրականացումը:

8.3.7 Բանկի Վարչության (Տնօրինության) նիստերը կազմակերպում և վարում է Բանկի Գործադիր տնօրեն-Վարչության նախագահը, որը ստորագրում է Վարչության (Տնօրինության) որոշումները:

8.3.8 Վարչությունը (Տնօրինությունը) իրավասու է որոշումներ ընդունել, եթե նիստին ներկա են Վարչության (Տնօրինության) անդամների կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում Գործադիր տնօրեն-Վարչության նախագահի ձայնը որոշիչ է:

8.4 Բանկի Գործադիր տնօրեն-Վարչության նախագահը

8.4.1 Բանկի Գործադիր տնօրեն-Վարչության նախագահը ղեկավարում է Բանկի ընթացիկ գործունեությունը:

8.4.2 Բանկի Գործադիր տնօրեն-Վարչության նախագահի իրավասություններն են՝

ա) Բանկի գույքի, այդ թվում՝ ֆինանսական միջոցների տնօրինումը,

բ) Բանկի անունից գործարքների կնքումը,

- գ) Հայաստանի Հանրապետության տարածքում և արտերկրում Բանկի ներկայացումը,
- դ) լիազորագրեր տալը,
- ե) առանց լիազորագրի գործելը,
- զ) սահմանված կարգով պայմանագրերի, այդ թվում՝ աշխատանքային, կնքումը,
- է) հաստատված հաստիքացուցակի շրջանակներում Բանկի աշխատողների, բացառությամբ՝ Բանկի վարչության, Ներքին աուդիտի անդամների և Խորհրդի նշանակման իրավասությանը պատկանող այլ աշխատողների, աշխատավարձի դրույքաչափերի սահմանումը,
- ը) իր իրավասության սահմաններում հրամանների, հրահանգների, կատարման համար պարտադիր ցուցումների արձակումը և դրանց կատարման վերահսկումը,
- թ) օրենսդրությամբ սահմանված կարգով Բանկի աշխատողներին աշխատանքի ընդունումը և աշխատանքից ազատումը,
- ժ) Բանկի աշխատողների նկատմամբ խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառումը,
- ժա) Օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված՝ այլ իրավասությունների իրականացումը:

## **9. ԲԱՆԿԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀԸ**

9.1 Բանկի գլխավոր հաշվապահը կամ նման պարտականություններ իրականացնող անձը (այսուհետ՝ գլխավոր հաշվապահ) իրականացնում է «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով գլխավոր հաշվապահի համար սահմանված իրավունքները և պարտականությունները:

9.2 Բանկի գլխավոր հաշվապահը նշանակվում է Բանկի խորհրդի կողմից՝ Բանկի Գործադիր տնօրեն-Վարչության նախագահի (Վարչության (Տնօրինության)) ներկայացմամբ:

9.3 Բանկի գլխավոր հաշվապահի իրավունքները և պարտականությունները չեն կարող փոխանցվել Բանկի ընդհանուր ժողովին, Բանկի խորհրդին, Բանկի գործադիր մարմնի անդամներին, Բանկի ներքին աուդիտին կամ այլ անձի:

9.4 Գլխավոր հաշվապահի պահանջների կատարումը՝ կապված հաշվապահական հաշվառման համար անհրաժեշտ տվյալների ու փաստաթղթերի ներկայացման հետ, պարտադիր է Բանկի բոլոր աշխատողների համար:

9.5 Առանձին տնտեսական գործառնությունների իրականացման հետ կապված՝ Բանկի Գործադիր տնօրեն-Վարչության նախագահի և գլխավոր հաշվապահի միջև տարաձայնությունների դեպքում գլխավոր հաշվապահը կատարման է ընդունում փաստաթղթերը՝ Բանկի Գործադիր տնօրեն-Վարչության նախագահի գրավոր կարգադրությամբ (հանձնարարությամբ), և նման գործառնությունների իրականացման հետևանքների պատասխանատվությունը կրում է Բանկի Գործադիր տնօրեն-Վարչության նախագահը:

9.6 Բանկի գլխավոր հաշվապահն առնվազն եռամսյակը մեկ անգամ Բանկի խորհրդին և Գործադիր տնօրեն-Վարչության նախագահին (Վարչությանը

(Տնօրինությանը)) ներկայացնում է ֆինանսական հաշվետվություն՝ Բանկի խորհրդի հաստատած ձևով և բովանդակությամբ:

9.7 Բանկի գլխավոր հաշվապահը պատասխանատվություն է կրում Բանկի հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Բանկի բաժնետերերին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Բանկի մասին տրամադրվող ֆինանսական տեղեկությունների հավաստիության համար՝ օրենքին, այլ իրավական ակտերին և Կանոնադրությանը համապատասխան:

## 10. ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏԸ

10.1 Ներքին աուդիտի ղեկավարը և անդամները նշանակվում են Բանկի խորհրդի կողմից: Ներքին աուդիտի անդամ չեն կարող լինել Բանկի կառավարման մարմինների անդամները, այլ ղեկավարներ ու աշխատողներ, ինչպես նաև Բանկի Վարչության (Տնօրինության) անդամների հետ փոխկապակցված անձինք:

10.2 Ներքին աուդիտի ղեկավարը և անդամները պարտավոր են պահպանել Բանկի աշխատողների համար սահմանված աշխատանքային կարգապահությունը:

10.3 Բանկի ներքին աուդիտը Բանկի խորհրդի կողմից հաստատված կանոնակարգի համաձայն՝

ա) անկախ գնահատական է տալիս Բանկի ներքին հսկողության, այդ թվում՝ ռիսկերի կառավարման համակարգերի, Բանկի կառավարման համակարգի և գործընթացների որակի, համարժեքության և արդյունավետության վերաբերյալ:

բ) եզրակացություններ և առաջարկություններ է տալիս Բանկի խորհրդի ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջադրած հարցերի վերաբերյալ:

10.4 Ներքին աուդիտի իրավասություններին վերաբերող հարցերը չեն կարող փոխանցվել Բանկի կառավարման մարմինների կամ այլ անձանց լուծմանը:

10.5 Ներքին աուդիտի ղեկավարը Բանկի խորհրդին և Վարչությանը (Տնօրինությանը) ներկայացնում է հետևյալ հաշվետվությունները՝

ա) հերթական՝ տարեկան ծրագրով սահմանված ստուգումների արդյունքների մասին:

բ) արտահերթ, եթե բացահայտվել են Ներքին աուդիտի հիմնավորված կարծիքով էական խախտումներ, ընդ որում, եթե խախտումները հետևանք են Գործադիր տնօրեն-Վարչության նախագահի, Վարչության (Տնօրինության) կամ խորհրդի գործողությունների կամ անգործության, ապա հաշվետվությունը ներկայացվում է անմիջապես Բանկի խորհրդի նախագահին:

Սույն մասով նախատեսված դեպքերում հաշվետվությունները ներկայացվում են խախտումը հայտնաբերելուց առավելագույնը երկու աշխատանքային օրվա ընթացքում:

10.6 Ներքին աուդիտն օրենքների, այլ իրավական ակտերի խախտումներ բացահայտելու դեպքում պարտավոր է դրանք ներկայացնել Բանկի խորհրդին՝

միաժամանակ առաջարկելով այդ խախտումների վերացման և ապագայում չկրկնման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումներ:

## **11. ԲԱՆԿԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԸ**

11.1 Բանկի ռիսկերի կառավարման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը՝

ա) բացահայտում, գնահատում է Բանկի գործունեությանը բնորոշ ռիսկերը, տալիս է Բանկի ռիսկի ընդհանուր նկարագիրը.

բ) հսկողություն և մոնիթորինգ է իրականացնում բացահայտված ռիսկերի նկատմամբ, ապահովում է դրանց արդյունավետ կառավարումը.

գ) Բանկի խորհրդի հաստատմանն է ներկայացնում Բանկի ռիսկերի կառավարման ռազմավարությունը, ռիսկի ընդունելի սահմանաչափը, ինչպես նաև առանձին ռիսկերի կառավարման քաղաքականությունները, Բանկի խորհրդի սահմանած պարբերականությամբ Խորհուրդ և Վարչություն (Տնօրինություն) հաշվետվություն է ներկայացնում Բանկի ռիսկերի նկարագրի և ռիսկերի կառավարման գործընթացների վերաբերյալ.

դ) իրականացնում է Կենտրոնական բանկի նորմատիվ, Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված ռիսկերի կառավարմանն առնչվող այլ գործառույթներ:

## **12. ԲԱՆԿԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԸ**

12.1 Բանկի համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը՝

ա) ապահովում է Բանկի և Բանկի աշխատողների գործունեության համապատասխանությունը օրենքների, այլ իրավական ակտերի, այդ թվում՝ Բանկի ներքին իրավական ակտերի պահանջներին.

բ) ապահովում է Բանկում պատասխանատու վարվելակերպի ձևավորումն ու պահպանումը.

գ) գնահատում է Բանկի գործունեության վրա օրենքների և այլ իրավական ակտերի հնարավոր փոփոխությունների ազդեցությունը և դրանց հետ կապված հնարավոր ռիսկերը.

դ) իրականացնում է Կենտրոնական բանկի նորմատիվ, Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված համապատասխանության ապահովմանն առնչվող այլ գործառույթներ:

## **13. ՀԱՇՎԱՌՈՒՄԸ, ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԿՈՒՄ**

13.1 Բանկը կազմում, հրապարակում և Կենտրոնական բանկ է ներկայացնում տարեկան, եռամսյակային ֆինանսական և այլ հաշվետվություններ՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով:



13.2 Բանկը հաշվապահական հաշվառումը վարում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի և կառավարության լիազորած մարմնի հետ համաձայնեցված կարգով՝ միջազգային ստանդարտներին համապատասխան:

13.3 Բանկի ֆինանսական տարին սկսվում է հունվարի 1-ին և ավարտվում է նույն տարվա դեկտեմբերի 31-ին:

13.4 Բանկի գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

13.5 Յուրաքանչյուր տարի Բանկի ֆինանսատնտեսական գործունեությունը ստուգվում է օրենսդրությամբ սահմանված կարգով ընտրված աուդիտորական ծառայությունների իրականացման իրավունք ունեցող անկախ աուդիտ իրականացնող անձի՝ արտաքին աուդիտի կողմից:

#### **14. ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ**

14.1 Բանկի գործունեությունը դադարեցվում է օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում:

14.2 Բանկի գործունեությունը դադարում է մեկ այլ բանկի հետ միացման և լուծարման դեպքում:

14.3 Բանկի միացումը կատարվում է Բանկի կառավարման բարձրագույն մարմնի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում, Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի համաձայնությամբ:

14.4 Բանկի լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարվում են օրենքով սահմանված կարգով:

14.5 Բանկը համարվում է լուծարված, լուծարային հանձնաժողովի կողմից իր գործունեության արդյունքների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ ներկայացված հաշվետվությունը վերջինիս կողմից հաստատելուց, բանկերի գրանցման մատյանում Կենտրոնական բանկի կողմից Բանկը գրանցումից հանելու մասին գրառում կատարելուց հետո:

#### **15. ԵՋՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

15.1 Կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատվում, ինչպես նաև Կանոնադրությունում լրացումներ և փոփոխություններ են կատարվում Բանկի ընդհանուր ժողովում՝ ձայների երեք քառորդով ընդունված որոշմամբ:

15.2 Կանոնադրությունն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկում գրանցվելու պահից: